

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ՅԱՆՈՅ»
ՔԱՆԱՔԱՂՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Յու. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վերջերս լույս տեսավ Մխիթար Անեցու Պատմության պահպանված մասի երկրորդ հրատարակությունը¹, որին որպես հավելված կցված է «Պատմութիւն քաղաքին Յանույ» խորագրով մի փոքրածավալ պատմագրական աշխատություն²։ Այս բնագրի ուսումնասիրման պատմությունը հարուստ է առաջին անգամ նրան հպանցիկ անդրադարձել է Ղ. Ալիշանը և այն որակել իբրև գործ «ուրումն Խաչատուրյանի վերջին գործից»³։ Հետագայում Հ. Անասյանը ներկայացրել է գործիս իրեն հայտնի ձեռագրերը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի⁴ ձեռ. № 7584 (էջ 348ա—54ա), 3079 (էջ 253ա—7բ) և, առանց հեղինակի ու ժամանակի հարցի քննության նպատակ ունենալու, այն նկարագրել որպես անհայտ հեղինակի աշխատություն⁵։ Հարկ է սկզբից հեթ ասել, որ Հ. Անասյանի նշած էջահամարների համաձայն բնագիրը կազմված է երեք մասից. ա. «Պատմութիւն քաղաքին Յանույ ծայրաքաղ և համառօտ ժողովեալ յայսմ վայրի» (այսուհետև՝ Անիի պատմություն), բ. «Նախ վասն խօնթարի և շահին և զկնի պղծին Ստեֆանի Օլախաց թագաւորի և շարեաց նորին որ առազգս հայոց» (այսուհետև՝ «Վասն խօնթարի»), գ. «Յաղագս աւերման աշխարհիս Հայոց» (այսուհետև՝ «Յաղագս աւերման»)։

Այս, հարցը գիտական լուրջ քննության նյութ դարձնելով, հանդես եկավ Գ. Աբգարյանը և եզրակացրեց, որ այս երկի հեղինակը Մխիթար Անեցին է. նրա վերագրումը հաստատող փաստարկները հանգում են հետևյալ կետերին⁷։

1. Միջնադարյան մի մատենագիտական ցանկում դրված է. «Մխիթար Յանեցի, որ է Պատմութիւն Յանույ քաղաքին և այլ ինչ բանից պիտանեաց»⁸. Խնդրո առարկա բնագրի վերնագիրը՝ «Պատմութիւն քաղաքին Յանույ», համընկնում է այդ նկարագրությանը «ընդհուպ մինչև Անի քաղաքի ոչ սովորական ձևով («Յանի») գործածությունը⁹։

2. «Ալիշանը բնագիրը համարել է «յետին դարուց» հավանաբար այն պատճառով, որ ձեռագրերում այս բնագրին որպես շարունակություն թյուրիմացաբար ընդօրինակված է ուշ ժամանակներին վերաբերող մի ժամանակագրություն, որը կապ չունի Անիի հետ»։ Այս հայեցակետով էլ Գ. Աբգարյանն առաջարկել է ձեռագրերի՝ Հ. Անասյանի նշած էջերը սրբագրել հետևյալ ձևով.

¹ Մ խ ի Թ ա Ր Ա ն Ե ց ի. Մատենա աշխարհավիպ հանդիսարանաց, աշխատասիրութեամբ Հ. Գ. Մարգարյանի. Երևան, 1933 (այսուհետև՝ Մ խ ի Թ ա Ր Ա ն Ե ց ի)։ Առաջին անգամ հրատարակել է Ք. Պատկանյանը (Պետերբուրգ, 1879)։

² Տե՛ս Մ խ ի Թ ա Ր Ա ն Ե ց ի, էջ 107—24։

³ Է. Ալիշան. Շիրակ. Վենետիկ, 1881, էջ 111։

⁴ Այսուհետև և՛ շարադրանքում, և՛ տողատակում՝ ՄՄ։

⁵ Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն, Կ—ԺԸ զգ. հ. Ա, Երևան, 1959 (այսուհետև՝ ՀՄ, Ա), էջ 894։

⁶ ՄՄ ձեռ. № 7584, էջ 348ա, 349բ, 350բ։

⁷ Տե՛ս Գ. Աբգարյան. Մատենագրական նորություններ.—ՀՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1964, № 1, էջ 75—7 (այսուհետև՝ Տեղեկագիր, 1964, № 1)։

⁸ ՀՄ, Ա, էջ LV։

⁹ Տեղեկագիր, 1964, № 1, էջ 75։

«№ 7584, էջ 348ա—9ա, սյունակ 2-րդ, տող 14, № 3079, էջ 253աբ (թերի)¹⁰»։ Այսինքն, Մխիթար Անեցուն համարել է միայն «Պատմութիւն Յանույ»-ի հեղինակ, իսկ սրա և մյուս Լրկու մասի միջև կապի հնարավորությունը չի ընդունել։

3. Բնագիրը վերջանում է 1236 թ.՝ մոնղոլների կողմից Անիի գրավման փաստի արձանագրմամբ։ «Հայտնի է, որ Մխիթար Անեցին ապրել է Սամվել Անեցուց հետո և Վարդան Արևելցուց առաջ։ Սամվել Անեցին իր ժամանակագրությունն ավարտում է 1166 թ., իսկ Վարդան Արևելցին՝ 1270 թ.։ Այսպիսով, 1236 թ. համապատասխանում է Մխիթար Անեցու ապրած ժամանակին»¹¹։

4. «Մխիթար Անեցու օգտին է խոսում նաև նորահայտ բնագրի բառապաշարը, ինչպես նաև գրվածքի շարադրման եղանակը», այսինքն՝ խնդրո առարկա բնագրի վերնագրին հաջորդող «ծայրափաղ և համառօտ ժողովեալ լայսմ վայրի» արտահայտությունն իր բնույթով մոտենում է Անեցու պատմության նախաբանի «ի մտի եդի ծայրափաղ աստ» և «քաղեսցուք աստի համառօտ և հակիրճ բանի» դարձվածներին։ Սրանից ելնելով էլ Գ. Աբգարյանը եղրակացրել է. «Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ հեղինակը «համառօտ ծայրափաղ» է անում իր աղբյուրները և այդ մասին հայտնում է գրեթե միևնույն բառերով»¹²։

Հ. Մարգարյանն իր հրատարակության առաջաբանում և ծանոթագրությունների մեջ «հանգամանորեն շանդրադառնալով» Գ. Աբգարյանի «փաստարկների քննությանը», «բնագրի մանրակրկիտ ուսումնասիրությունից» եզրակացրել է, որ Անիի պատմությունը (Գ. Աբգարյանի ընդունած սահմաններում) «ռչ րե որևէ մեկի ինֆնուրույն ստեղծագործությունն է, այլ տարբեր աղբյուրներից կատարված ֆաղագրություն։ «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի կազմող-հեղինակն օգտվել է ինչպես Հովհաննես Դրասխանակերտցուց, Սամվել Անեցուց, Մատթեոս Ուտայեցուց (ավելի շուտ՝ Գրիգոր Երեցից), այնպես էլ Մխիթար Անեցուց հետո ստեղծագործած Վարդան Արևելցուց և Կիրակոս Գանձակեցուց»¹³։ Բնագրի՝ Գ. Աբգարյանի վերոհիշյալ բաժանումը չընդունելով, նա նկատել է. «Ձեռագրերում ի մի են բերվել և մատենագրական մեկ ինքնակա միավոր են ներկայացնում երեք ինքնուրույն երկ, որոնց համար, սակայն, ընդհանուր է Անիին կամ Երեմյանի անեցիներին վերաբերելը»¹⁴, ի վերջո, Հ. Մարգարյանը հետևում է Դ. Ալիշանին և Անիի պատմությունը համարում գործ «ուրումն ազգայնոյ յետին դարուց»¹⁵։ Այսպիսով, Անիի պատմությունը Մխիթար Անեցու գրչին վերագրելու վարկածը մերժելով և բնագիրը հրատարակելով հանդերձ, նրա հեղինակի ու ժամանակի հարցը կրկին բաց է թողնում։

Այս հողվածով նպատակ ունենք ներկայացնել այդ հարցին վերաբերող մեր տեսակետը, որ հենվում է վերոհիշյալ ձեռագրերի մի շարք հատկանիշների վրա։ Բայց նախ պարտավոր ենք, ըստ վերը ներկայացված կարգի, համառոտակի անդրադառնալ Գ. Աբգարյանի փաստարկներին։

1. Վկայակոչված մատենագիտական ցուանկի օրինակներից հնագույնը պահպանվել է ՄՄ № 2271 ձեռագրում, որի կաղմող-հեղինակը նոր Զուղայի թեմակալ արքեպիսկոպոս Մովսես Զուղայեցին է (1706—1725) և որը նրա իսկ պատվերով 1724 թ. Սպահանում գրվել և նկարագարողվել է Ավետիս Երե-

10 Նույն տեղում, էջ 76։ Ձեռագրերի նկարագրությունների մեջ ևս այս մասերը ներկայացված են իբրև առանձին մատենագրական միավորներ. տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի տնիւն Մատենադարանի, կաղմեցին Ս. Եզանյան, Փ. Անթարյան, Ա. Ջեյթունյան, հ. Ա, Երեվան, 1965, էջ 936, հ. Բ, 1970, էջ 564 (այսուհետև՝ Ցուցակ ձեռագրաց ՄՄ, Ա և Բ)։

11 Տեղեկապիւր, 1964, № 1, էջ 76։

12 Նույն տեղում (ընդգծումները Գ. Աբգարյանինն են)։

13 Մխիթար Անեցի, էջ 10 (ընդգծումները մերն են—Յու. Վ.)։

14 Նույն տեղում, էջ 124։

15 Նույն տեղում, էջ 10։

ցի ձեռքով: Այստեղ պահպանվել է նաև գաղափար օրինակի հիշատակարանը, գրված նույն Մովսես Զուղայեցու անունից. «Ես անարժանա և տրուպս ի բանասիրաց, Մովսէս սուտանուն բանի վատնողս, ժողովեցի փոքրիկ գրկուկս յաղագս Բ (2) պատճառի. նախ՝ վասն սաստիկ մոռացկոտութեան մտացս ժողովեալ ի միասին եղի, զի դիւրնկալ լիցի ի սեւտելն, երկրորդ՝ զի ուր և երբիցեմ, զսա ընդ իս պահիցեմ վասն փոքրկութեան և թեթևութեան, քանզի զմեծամեծ գրեանսն ոչ լինի այսօր և անգոր շրջեցուցանել... Գրեցաւ ի թիւն ԽճԽԵՆ (1696)»¹⁶: Զեռագրի բուն հիշատակարանում, որն արդեն գրված է Ավետիս գրչի անունից, կարդում ենք. «Իսկ ի յերկրորդի վերստին փոխարկութեան դաղափարելոյ մատենիս, զոր սակս յաւելումն զանազան բանից պիտոյից օգտակարաց՝ սրբոց վարդապետաց ասացելոց, եղև ժողովեալ և ի ներս ածեալ յոճնաշխատ երկօք ի նոյն Մովսիսէ յաջորդէ կորովաբան սրբազան վարդապետէ, որ եղև ի զրաւ գրութեանս ի թուականիս հայոց ԹՃՀԳ (1724) ամին...»¹⁷: Հստակ երևում է, որ բազմաբնույթ նյութերի այս ժողովածուն կազմել է ձեռագրի ստացողը. կտրելի է ենթադրել, որ հենց նրա «յոթնաշխատ» ցանկերի արդյունքն է նաև այստեղ հավաքված տեղեկատու և մատենագիտական ցանկերի մեծ մասը, որոնց թվին հնարավոր է դասել նաև պատմագիրների վկայակոչված ցուցակը: Որոշ ձեռագրական փաստեր մեզ թույլ են տալիս մտածել, որ 1696 թ. տարբերակում վերջինս չի եղել, այսինքն՝ այն կազմվել է շուրջ 1724 թ.: Ազդային պատմագիրների մասի վերջում նշված է 1701 թ., իսկ հայերեն թարգմանությամբ գոյություն ունեցող պատմագրերի հատվածում վկայակոչված է 1711 թ.¹⁸ (բացառված չէ, որ Զուղայեցու գործը ձևավորված լինի մի այլ հեղինակի ավելի հին ցանկի խմբագրման եղանակով): Ինչպես կտեսնենք, ցանկի այս թվագրումը չի հակասում Անիի պատմության առաջացման մեր առաջարկելիք ժամանակին՝ XVIII դարի առաջին քառորդում այն արդեն գոյություն ունեւր և Մովսես Զուղայեցու գրչի տակ կարող էր սխալմամբ վերագրվել Մխիթար Անեցուն:

Բսկ մյուս կողմից՝ Մխիթար Անեցու պատմության ինքնուրույն մասը կորսված է, և մենք չգիտենք, թե այնտեղ Անիին որքան տեղ էր հատկացված. հնարավոր է, որ Բագրատունյաց մայրաքաղաքը դեպքերի կենտրոնում էր, որ լիովին հավանական է, իսկ մնացած մասը ստացել է Մովսես Զուղայեցու «այլ ինչ պիտանեաց» պատմություն որակումը: Ի վերջո, ցանկի շարադրանքից երևում է, որ կազմելու ժամանակ նրա հեղինակը ձեռքի տակ ունեցել է թվարկված գործերի միայն մի մասը, երկրորդ մասը բնորոշել է հիշողությամբ, երրորդը՝ «ի լրոյ»: Այսպես, գրելիս ձեռքին եղել է. «Արիստակէս Լաստիվարդացի. սկսեալ ի ԴՃԾԲ (1003) թուէն մինչև ի ՆՃԼ (1081) թիւն, ողբերգական դիմօք». հիշել է՝ «Ուխտանէս, որ է Պատմութիւն բաժանման Վրաց

¹⁶ ՄՄ, ձեռ. N° 2271, էջ 244ա:

¹⁷ Նույն տեղում, էջ 244բ (ընդգծումները մերն են—Յո. Վ.):

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 214ա, 215ա. հմմտ. ՉԼԲ, Ս, էջ 1.V—1.VI: Ն. Ակինյանը, հենվելով ավելի շատ ոչ թե փաստերի, այլ՝ վարդան Բաղիշեցու: անձի ու գործի նկատմամբ ունեցած մեծ հարգանքի վրա, այս ցանկը համարել է նրա ստեղծագործությունը, միաժամանակ հնարավոր է դատել Մովսես Զուղայեցու հավելումներ համարել վերոհիշյալ 1701 և 1711 թթ. հիշատակումներով հատվածները (տե՛ս Ն. Ակինյան. Բաղիշի գպրոցը. 1500—1704, Նըպոստ մը հայոց եկեղեցւոյ պատմութեան և մատենագրութեան. Վիեննա 1952, էջ 289—93. հմմտ. «Հանգես ամսաթյա», 1952, էջ 53—4): Դ. Արգարյանն անառարկելի փաստերով ապացուցել է, որ այս ցանկը Վարդան Բաղիշեցու անվան հետ կապ չունի, սակայն, անհիմն համարելով Մովսես Զուղայեցուն ցանկի մեջ մուծված երկու հավելման հեղինակ համարելու մասին Ե. Ակինյանի ենթադրությունը, եզրակացրել է, «որ այն հորինել է մի անհայտ հեղինակ» (Գ. Ս ր ց ր յ ան. Բանասիրական հետախուզումներ.— Բանբեր Մատենադարանի», հ. 4, Երևան, 1958, էջ 73—4): Մովսես Զուղայեցու մատենագրական վաստակը պարունակող հինգ տասնյակից ավելի ձեռագրերի քննությունը մեզ թույլ է տվել եզրակացնել, որ խնդրո առարկա ցանկի «անհայտ հեղինակն» ամենայն հավանականությամբ հենց նա է:

ի Հայոց»։ չի տեսել՝ «Սարկաւագ վարդապետն սուրբ Յովհաննէս. արար եկեղեցական պատմագիրք»¹⁹։ Իսկ Կիրակոս Գանձակեցուն նվիրված տողը բավական նման է Մխիթար Անեցու գործին տրված որակմանը. «Կիրակոս պատմագիրք. ևս վասն ազգին թարգմանաց և այլ պիտանի բանից»²⁰։ Հայտնի է, թե Գանձակեցու երկում որքան տեղ է հատկացված թաթարների և որքան՝ «այլ պիտանի բանից» պատմություններին, ուստի և եթե այսօր հայտնաբերվի թաթարների մասին պատմող որևէ համառոտ բանաբաղություն, ապա հազիվ թե այն վերագրվի Կիրակոս Գանձակեցուն։

2. Բնագրի երեք մասերն իրարից անկախ միավորներ համարելով, Գ. Աբգարյանը, անշուշտ, ճիշտ է վարվել. երկրորդ մասի վերջում կա նույնիսկ նրա ստեղծման ժամանակի մատնանշումը. «Ի ժամանակիս այսմիկ, որ է թիւ հայոց Ռե (1556)»²¹։ Նույն այս մասը, առայժմ հայտնի նույն ձևագրերի հիման վրա, իբրև ինքնուրույն մատենագրական միավոր տպագրել է նաև աղբյուրագետ Վ. Հակոբյանը²²։ Երբորդ հատվածի առաջին կեսն էլ տպագրել է Ղ. Տալանը²³. նրա հիմքն էլ եղել է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի «Խրմբարգիր ԻԱ. Բ. Թիւ 6» ձեռագիրը, որտեղ նյութը խորագրված է «Պատմական հատուածը հանեալ ի ձեռագրաց Կարապետ վարդապետի Շահնազարեանց» ձեռով²⁴։ Հայտնի է, որ Մխիթարյաններն իրենց ձեռագրական հավաքածուները հարստացնում էին ոչ միայն գնումներով և ընծայաբերություններով, այլև՝ ալդ եղանակներով իրենց շտրված արժեքավոր ձեռագրերն ընդօրինակելով բերված խորագրից երևում է, որ այս դեպքում ևս գործ ունենք ԺԹ դ. գրված նման մի ձեռագրի հետ, իսկ մի նկարագրությունից պարզվում է, որ այն Վենետիկի № 1562 ձեռագիրն է և ձևավորվել է ԺԹ դ. երկրորդ կեսին²⁵։ Ուրեմն, սխալ չի լինի մտածել, որ Ղ. Տալանի հրատարակած հատվածը ևս ձեռագրական ավանդույթով կարող է կապված լինել ՄՄ №№ 7584 և 3079 ձեռագրերի հետ (այս ենթադրությունն ստուգելու հնարավորություն չունենք)։

Այսպիսով, ընդունելով հանդերձ, որ այս բնագիրն ունի երեք առանձին մաս, գտնում ենք, որ այդ մասերն իրար են կցվել ոչ թե որևէ գրչի ձեռքով՝ մեխանիկորեն, «թյուրիմացաբար» կամ «սխալմամբ»²⁶, այլ՝ ինչ-որ մի «կազմող-հեղինակի»²⁷ նախաձեռնությամբ, որը եթե նույնիսկ երեք մասերն էլ ինքը չի ստեղծել, ապա գոնե իր ստեղծածներն ու պատրաստի վերցրածները ենթարկել է որոշ խմբագրման ու վերամշակման և դրանք հաշտեցրել իրար հետ, որովհետև երեք մասի համար էլ «ընդհանուր է Անիին և Երբեմնի անեցիներին վերաբերելը»²⁸։ Քանի դեռ չեն գտնվել մեզ հայտնի ձեռագրերից ավելի հին օրինակներ, որոնցում այս բնագրի տարբեր մասերը գոյություն ու-

19 ՀՄ, Ա, էջ LIV:

20 Նույն տեղում, էջ LV (ընդգծումը մերն է—Յու. Վ.):

21 ՄՄ ձեռ. № 7584, էջ 350բ:

22 Տե՛ս Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Ա. Հակոբյան. Հ. Ա, Երևան, 1951 (այսուհետև՝ ՄԺ, Ա), էջ 136—8:

23 Ղ. Տալան. Պատմութիւն Շապուղ Բագրատունու և Ս. Ղազարու գրչագիրները.— «Բաղմավեպ», 1922, էջ 69—73:

24 «Բաղմավեպ», 1922, էջ 69. Ըստ Տալանի, այս նյութը Շապուղ Բագրատունու հետ կապ չունի, որովհետև երբեմն համընկնում է Դրասխանակիրացու պատմությանը, երբեմն՝ համառոտում այն, երբեմն էլ, շատ բան դանց առնելով անցնում ուրաջ:

25 Տե՛ս Մ. Ավագբեյան. Մատենական ցանկ ձեռագրաց հայոց եղելոց ի գրատան վանից միանձանց Հայոց Մխիթարեանց... որ ի Վենետիկ, էջ 55բ (ՄՄ Անտիպ ձեռագրացուցակ, № 133, օժանդակ մաս № 1):

26 Տեղեկագիր, 1964, № 1, էջ 76:

27 Մխիթար Սնեցի, էջ 10:

28 Նույն տեղում, էջ 124: Ըստ այսմ էլ կարելի է ամբողջ բնագիրը պայմանականորեն անվանել «Պատմութիւն Անույ և անեցուց»:

նենային իրարից անկախ և ավանդույթով կապված լինեին այլ բնագրերի հետ. նրանց համատեղ գոյությունը թյուրիմացություն համարել չենք կարող:

3. Մխիթար Անեցուն վերագրված հատվածը 1236 թ. չի վերջանում. մոնղոլների կողմից Անիի գրավման տեղեկությունից հետո այստեղ ժամանակագրորեն ետդարձ է արվում և, Վարդան Արենցու երկի հիման վրա, պատմվում 1185 թ. վերաբերող իրադարձությունների մասին²⁹: Մյուս կողմից, հայտնի է, որ մեկ տասնամյակ տևած աշխատանքից հետո Մխիթար Անեցին իր գործն ավարտել 1193 թ.³⁰, հնարավոր է, որ նա իսկապես «կենդանի էր նաև XIII դարի առաջին տասնամյակներին»³¹, բայց հաղիվ թե որևէ մեկն այդպիսի պատասխանատու գործը ձեռնարկած լինեի երիտասարդ տարիքում: Ուրեմն և անհավանական է ենթադրել, թե 1236 թ. XIII դարի 4-րդ տասնամյակում, նա կարող էր դեռևս կենդանի լինել:

4. «Շաղկաքաղ», «ծայրաքաղ» և «համառոտ» բառերի կիրառումն այս կարգի բանաբառությունների դեպքում, հավանաբար, պետք է համարել աշխատանքանակի թելադրած անհրաժեշտություն: Ծիշտ է, վաղ միջնադարյան բնագրերում սովորաբար օգտագործվում է «ծայրաքաղ առնել» ձևը³², բայց սրա և «ծայրաքաղ ժողովել» ու «ծայրաքաղ գրել» ձևերի միջև ըստ էության որևէ իմաստային տարբերություն չկա, հնարավոր է, որ միևնույն հեղինակն օգտագործեր միաժամանակ երկու կամ երեք ձև: Ի վերջո, հիշենք, որ ներսես Շնորհալին էլ գրել է. «Զորս համառոտ և ծայրաքաղ փոքր ինչ ցուցաբ զաղէտլս իրին»³³:

Այսպիսով, «Պատմութիւն քաղաքին Տանտյ» բանաբառությունը Մխիթար Անեցունը չէ: Մեր կարծիքով նրա հեղինակի հարցը կարող է պարզվել գոյություն ունեցող ձեռագրերի բնագրական և ձեռագրագիտական յուրահատկությունների քննության միջոցով: Այստեղ բազմիցս հիշատակված երկու ձեռագրերից բացի, հրատարակության մեջ օգտագործվել է նաև Ք. Պատկանյանի ձեռքով արված մի ընդօրինակություն³⁴: Թեև 2. Մարգարյանն ասում է, թե վերջինս «արտագրված լինելով մեզ չհասած գրագրից, ինքնուրույն ձեռագրի արժեք ունի»³⁵, բայց իրականում սա ընդօրինակված է ՄՄ № 3079 ձեռագրից: Առանց մասնամասների մեջ մտնելու, բերենք ասվածը հաստատող մեկ-երկու փաստարկ. № 3079 ձեռագրի 353բ և 354ա էջերի արանքից ընկած է մեկ թերթ, որով բնագրից պակասում է 2,7 տպագիր էջ³⁶. Նույն պակասը կա նաև Պատկանյանի օրինակում, ըստ որում, ընդօրինակված է առանց թերին դալու, իսկ շարադրանքն ստացել է անկապ տեսք. «սկսան շուն» առնուլ և ապա («ապահովմանալ» բառի առաջին վանկն է—Յու. Վ.) տօշակ շինեցին»³⁷: Պատկանյանը նույնություն մեջ վերարտագրել է նաև գաղափար օրինակում բնագիրը եզրափակող խոշորագիր «Վերջ» բառը³⁸: № 3079 ձեռագիրն էջմիածնի «Գեվորգյան» հավաքածուի մեջ մտնելուց (1879 թ.) առաջ եղել է Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի սեփականությունը³⁹: Հիշենք, որ նույն Ս. Ջալալյանին պատկանած, այժմյան ՄՄ № 2678 ձեռագրից⁴⁰ է Ք. Պատկանյանն առա-

²⁹ Նույն տեղում, էջ 110—1:

³⁰ Նույն տեղում, էջ 12:

³¹ Նույն տեղում, էջ 6:

³² Տեղեկագիր, 1964, № 1, էջ 76:

³³ Ն եր ս է ս Շ ն ո Ր հ ա լ ի. Ողբ եղեսիոյ. Երևան, 1973, էջ 93:

³⁴ ՄՄ, Պատկանյանների դիվան, թղթ. 142, վավ. 150 (այսուհետև՝ Պատկ. օրինակ):

³⁵ Մ խ ի Թ ա Ր Ա ն Ե ց ի, էջ 123:

³⁶ Նույն տեղում, էջ 109:9—112:15:

³⁷ Պատկ. օրինակ, էջ 3ա:

³⁸ ՄՄ ձեռ. № 3079, էջ 257բ. հմմտ. Պատկ. օրինակ, էջ 11ա:

³⁹ Տե՛ս Օ. Է գ ա ն յ ա ն. Մատենադարանի ձեռագրական հավաքածուները.— Ծուցակ ձեռագրաց ՄՄ, Ա, էջ 70:

⁴⁰ Նույն տեղում:

չին անգամ (նույն 1879 թ.) տպագրել Մխիթար Անեցու պատմութիւնը: Հ. Մարգարյանի հրատարակութեան մէջ ևս N 3079 ձեռագրի (Բ) և Պատկան-
յանի օրինակի (Գ) ընթերցվածները հիմնականում նույնն են, իսկ տար-
բերութիւնները Պատկանյանի սխալ ընթերցումները կամ վերահիմնարարութ-
ւումներն են («գեկան»-ը դարձրել է «դահեկան» և այլն): Այսպիսով, Պատ-
կանյանի օրինակը մեղ ոչինչ չի կարող տալ:

Բոլորովին այլ է նրա հիմքը՝ ՄՄ N 3079 ձեռագիրը. սա պատմագրական
մանր ու մեծ երկերի չափազանց ուշագրավ մի հավաքածու է, որ Մատենա-
դարանի ձեռագրացուցակում նկարագրված է իբրև երկու տարբեր ժամա-
նակներում գրված և մի սեղ կազմված հուշարձան. «Ժէ գ., 1700 թ.: Կ. Պօլիս
(Բ): Գրիչ՝ Մարգար Զմիռնացի (Բ)»⁴¹: Բայց ավելի ուշագիր քննութեան շը-
նորհիվ բացահայտվում է, որ սա կազմված է յոթ տարբեր անձանց ձեռքով
գրված երեք մասից.

ա. 1ա—228բ. Մարտինոս Օպավացու «Գաւազանագիրք» (թարգմ. Ներ-
սևս Պալիանենցի). ժամանակ՝ 1720 թ. սեպտ. 22, տեղ՝ Ստամպոլ, Ի Ղալա-
թայ, գրիչ՝ Մարգիս Եպիսկոպոս Սահեթճի Էվդոկիացի, հիշատակարան՝ 223բ:
բ. 229ա—58բ. պատմական մանր երկեր. ժամանակ՝ 1727 թ. առաջ և
հետո, հիշատակարան՝ 239բ:

գ. 259ա—379բ. Փաւստոս Բուզանդի Պատմութիւն Հայոց. ժամանակ՝
1700 թ., տեղ՝ Կոստանդնուպոլիս, գրիչ՝ Մարգար Զմիռնացի, հիշատակա-
րան՝ 378ա:

Փաւստոսի պատմութեան մասն ունի ինքնուրույն մամուլահամարներ՝
Ա—ԺԱ (թերթաքանակն անհավասարաչափ է՝ մամուլում 2—20), Մարտի-
նոսի երկի հատվածը, որ ձեռագրի սկիզբն է՝ Ա—ԺԹ (յուրաքանչյուր մա-
մուլը՝ 12 թերթ): Միջին հատվածում շարունակվում են վերջինիս մամուլա-
համարները՝ Ի—ԻԳ: Սա ամենափոքրածավալն է (31 թերթ), բայց նյութերի
բազմազանութեան և հարցականների շատութեան առումով ամենաուշագրավն
է: Քանի որ Անիի պատմութիւնը հենց այս մասում է, ուստի փորձենք պար-
զել սրա ստեղծման միջավայրն ու հանգամանքները:

Այս հատվածը գրված է երկու տեսակ թղթի վրա (յուրաքանչյուրից 2-
ական մամուլ՝ Ի—ԻԱ և ԻԲ—ԻԳ), հինգ տարբեր ձեռքով: Ըստ վերջին հատ-
կանիչի ներկայացնենք այս մասի բովանդակութիւնը.

Առաջին գրիչ. մամուլ Ի. 229ա—35բ—7 թերթ⁴².

1. 229բ—31ա. «Նորագոյն իրս և արմացի, որ կալ յերկրի՝ մարդիք Պրա-
կամանի անուն»:

2. 231ա—2բ. «Դարձեալ և այլ հիանալի իրս և գոյացութիւնս Աստու-
ծոյ»:

3. 232բ—4բ. «Կայսերի Հռոմայ մեծի գահին՝ կարգեալ մի գէնի միոյ»:

4. 234բ—5բ. «Յանկ և անուանի քաղաւորացն Օսմանցոց կարգաւ»:

Առաջին երկուսը Մարտինոսի երկի բաղկացուցիչ մասն են կազմում⁴³,
իսկ երրորդը, ինչպես և նախորդ երկուսը, ընդօրինակված է նույն Գավա-
զանագրքի մի այլ օրինակից (ներառյալ նաև գրչի հիշատակարանը)⁴⁴, վեր-
ջինը չափածո է և, հավանաբար, պոլսահայ մատենագիրներից մեկի գործն է:
Երկրորդ գրիչ. մամուլ ԻԱ. 236ա—40բ—6 թերթ⁴⁵.

5. 236ա—9բ. «Գաւազանագիրք շորից պատրիարգաց՝ [Հռոմայ, Աղէֆ-
սանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղէմի]»:

⁴¹ Ցուցակ ձեռագրաց ՄՄ, Ա, էջ 936:

⁴² Նախապես եղել է 8. 235-րդից հետո մեկ թերթ կտրված է:

⁴³ Տե՛ս 3 ու. Վ արդանյա ն. «Հրաշք»-գրույցները Մարտինոս Օպավացու «Գաւազանա-
գրքի» հայերեն թարգմանութեան մէջ.— ՀՍՍՀ ԳԱ «Կրթութեան հաս. գիտ.», 1982, № 4, էջ 73—4:

⁴⁴ Տե՛ս Վենետիկի Մխիթ. մատ. ձեռ. № 284 (1699 թ., Կ. Պօլիս, ստացող՝ Յարութիւն
Լպս. Լեոնյան), էջ 335—7:

⁴⁵ 237-րդը կրկնված է:

Սա աթոռակալների ժամանակագրական թվարկում է, սկզբում խոստանում է «Գաւազանաւ իջանել մինչև ի 2 (700) թիւն փրկչին», բայց ավարտում է հետևյալ հիշատակարանով. «Յամի Տեառն ՌԶԻՆ (1727), յամսեանն մարտի 9 (3), ի փառս Տեառն Յիսուսի և ի յօգուտ թարգմանեալ եղև զԳաւազանագիրքս շորից պատրիարգաց, սկսեալ ի սրբոյն Պետրոսէ առաքելոյն մինչև յամս Տեառն ՌԶԱ (681)... ի յունաց և ի լատինացոց լեզուէ ի հայկական բարբառ»: Այս թարգմանության այլ օրինակ մեզ հայտնի չէ, նրա բանասիրական-աղբյուրագիտական հարցերը պարզված չեն, բայց ակնհայտ է, որ ստեղծվել է ԺԸ դ. առաջին երեսնամյակի պոլսահայ կաթոլիկների միջավայրում:

Երրորդ գրիչ. մամուլ ԻԲ. 241ա—52բ=12 թերթ.

6. 242ա—51ա. «Ազգաբանութիւն Հայոց ազգիս»:

Հ. Անասյանն այս բնագիրը մանրամասն նկարագրելով, բնորոշել է իբրև «պատմական անանուն և անտիպ աշխատություն»⁴⁶, բայց իրականում նշանավոր Մինաս Համթեցու⁴⁷ գործն է: Միալի հիմնական, գուցե և միակ, պատճառն այն է, որ սրա առաջին (նաև՝ նրանից բխող երկրորդ) հրատարակությունը վերնագրված է. «Ազգաբանութիւն թագաւորացն Հաւոց, յորդուց յորդիս, Համառօտեալ ի Մովսիսէ խորենացոյն»⁴⁸, որը նկատի ունենալով էլ Հ. Անասյանը նախորդ տողում գրել է. «Ազգաբանութիւն թագաւորացն Հաւոց, տես Մինաս Համթեցի»⁴⁹, իսկ ձեռագրի վերնագիրը, ինչպես տեսնում ենք, մի փոքր տարբեր է: Ուշագրավ է, որ սա Համթեցու այս գործի միակ ամբողջական ձեռագիրն է (ՄՄ № 1663 ձեռագիրն ընդօրինակված է Պոլսի 1735 թ. տպագրից):

Չորրորդ գրիչ. լրացրել է նույն ԻԲ մամուլի չգրված էջերը.

7. 251բ—2ա. «Յաղագս քաղաւորացն Հայոց... Արշակունեաց»:

8. 252աբ. «Յաղագս քաղաւորացն Հոսմայ և Յունաց ի մեծէն Կոստանդիանոսէ մինչև ի փոքր Թէոդոս»:

Հինգերորդ գրիչ. մամուլ ԻԳ. 253ա—8բ=6 թերթ⁵⁰.

9. 253ա—7բ. «Պատմութիւն Բաղաբի Յանույ»:

Այսպիսով, այս 31 թերթանոց մասում ունենք 9 բնագիր, որոնց մեծ մասը բանաբաղություններ են, իսկ բնույթով՝ տեղեկատու ցանկեր: Այժմ դիմենք ձեռագրի արտաքին նկարագրական հատկանիշներին (թերթերի ընդհանուր մեծությունը՝ 20,5×15,5).

Ստորև բերվող աղյուսակից պարզվում է, թե ձեռագրի միջին մասի նյութերը հավաքողն ու ամբողջացնողը իր ձեռքին եղած արդեն գրված կամ գրվելիք մամուլները պատրաստի մասերից (Մարտինոս և Փավստոս) որին է հարմարեցրել: Փավստոսի հատվածի թերթերի լուսանցներն այժմ շատ նեղ են, ուրեմն՝ այն ելրահատվել է (նույնպես և միջին մասի 1-ին և 2-րդ գրիչների գրածները), չորրորդ գրիչը, ինչպես ասել ենք, ծավալով մեծ երևացող իր բնագրերը նախորդի գրած մամուլի ազատ էջերի վրա տեղավորելու համար ստիպված է եղել օգտագործել նաև ստորին՝ լայն լուսանցները: Իսկ Համթեցու գործը և Անիի պատմությունը գրադաշտի չափերով ու տողաբանակով հարմարեցվել են Մարգիս Սահեթճու ձեռագրի չափերին: Միջին մասի նյութերը բնույթով ևս համահունչն են Մարտինոսի երկին. սրա և՛ բնագիրը, և՛ թարգմանությունները ամենուր եղել են եվրոպայի պատմության կարևոր դեպքերի և աշխարհիկ ու հոգևոր տիրակալների մասին պատմող տեղեկատու աղբյուր: Ձեռագրի

46 ՀՄ, Ա, էջ 285 (ընդգծումը մերն է—Յու. Վ.):

47 Սա նրա ինքնանվանումն է, գրում էր «Յամթեցի» և «Համթեցի» ձևերով:

48 Հեղինակի անունը և հրատարակության հանգամանքները (Կ. Պոլիս, 1735, տպ. Բարսեղ և Հակոբ Սեբաստացիների) նշված են գրքի հիշատակարաններում. տե՛ս էջ 59, 164, 178 (այսուհետև այս գիրքը կհղենք Մինաս Համթեցի, տպագիր), հմմտ. Մինաս Վ. Համթեցուց Ազգաբանութիւն Հաւոց. Վաղարշապատ, 1870:

49 ՀՄ, Ա, էջ 285:

50 Նախապես եղել է 8 թերթ:

Գրիչ	Բովանդակություն	Էջեր	Գրություն	Գրադաշտ	Տող
Սարգիս	Մարտինոս	1ա—228ա	միասյուն	15,7×10,7	30
1-ին	Մասունք Մարտինոսի, կայսերը Հռոմայ, Թագաւորք Օսմանցւոց	229բ—35բ	միասյուն երկսյուն	17,3×10,8	22
2-րդ	Պատրիարքունք	236ա—9բ	երկսյուն ⁵¹	18,4×13,5	19
3-րդ	Աղգաբանութիւն Համթ.	242ա—51ա	երկսյուն	15,5×11	30
4-րդ	Թագաւորք Արշակունիք, կայսերք Բիւզանդիոյ	251բ—2բ	երկսյուն	17×11	33
5-րդ	Պատմութիւն Յանույ	253ա—7բ	միասյուն	15,5×10,8	30
Մարգար	Փաւստոս Բուզանդ	259ա—378ա	երկսյուն	18,5×12,5	33

Լրկորդ: մասի կազմողն ըստ էութեան ընդլայնել է իր ժողովածուի այդ նշանակութիւնը և այնտեղ մտնել Հայաստանի (Համթեցու Աղգաբանութիւն, Արշակունի թագավորների ցանկ, Անիի պատմութիւն), թուրք սուլթանների և պատրիարքական աթոռների պատմութիւններին վերաբերող տեղեկատու ցանկեր: Այսպիսով, միջին մասը կապված է առաջինի հետ և նրա անմիջական շարունակութիւնն է, իսկ կարող ենք այստեղեղներ դրանք դիտել իբրև մի միասնութիւն:

Այստեղից մեզ հայտնի դարձավ երկու աւանդ՝ Մինաս Համթեցի և Սարգիս Եփրեմեացի. Լրկուն էլ նշանավոր դեմքեր էին և երկուսի մասին էլ պահպանվել են բավական մանրամասն տեղեկութիւններ, որոնցից կհիշենք մեր խնդրի համար էականները.

Մինաս Համթեցին (1630—1704) աշակերտել է Մարկոս Չնքուշեցուն, նրանից ստացել վարդապետական գավազան (1655 թ.), 1666 թ. Երուսաղեմում Եղիազար Այնթապցի հակաթոռ կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս է դարձել, ապա՝ «1666—1691. Ժամանակակիցները կվկայեն, թե Մինաս 24 տարի պաշտոնավարած է Եղիազար կաթողիկոսի եկեղեցական վարչութեան մեջ՝ Երուսաղեմ և էջմիածին» և եղել է նրա «սիրելի և ձեռնասուն պաշտոնյա»-ն⁵²: Իսկ Եղիազար Այնթապցու ազատագրական ձգտումները, արևմտյան կողմնորոշումը և, հանուն անկեղծ քաղաքական օգնութիւն, կաթողիկ եկեղեցուն խոստացած զիջումների փաստերը հանրահայտ են⁵³:

Եթե նա ի դեմս Մինասի «գտած էր... մարդը, որուն պետք ուներ»⁵⁴, ապա պետք է մտածել, որ Մինասը համոզմունքներով հեռու չէր Եղիազարից: Սարգիս Սահեթճին (1651—1731) էլ 1672 թ. Գաղատիայում աշակերտել է Մինաս Համթեցուն, 1673 թ. նրանից ստացել արեղայի աստիճան, 1674 թ. նրա հետ ուղևորվել Երուսաղեմ, 1676 թ. կրկին գնացել Եղիազարի մոտ և նրանից ստացել եպիսկոպոսի աստիճան, ապա՝ 1690—1720-ական թթ. եղել է «Կ. Պօլսո մեջ գործող գլխավոր կաթողիկեներն մեկը»⁵⁵:

Այսպիսով, ՄՄ № 3079 ձեռագիրն ստեղծվել է XVIII դարի առաջին երեսնամյակին պոստհայ կաթողիկեների միջավայրում: Մնում է հիշել մի այլ հան-

⁵¹ Գրված է ոչ թե էջերի լայնքով՝ վերից վար, այլ՝ երկայնքով՝ ձախից աջ:

⁵² Մանրամասն տե՛ս Ն. Ա. Կիւնյան. Մինաս Ամդեցի, պատրիարք հայոց Երուսաղեմի.— «Հանդես ամսօրյա», 1960, էջ 321—60:

⁵³ Տե՛ս Ն. Ա. Կիւնյան. XVII դ. ազատագրական շարժումներն Սրբմտյան Հայաստանում. Երևան, 1961, էջ 241—72:

⁵⁴ Ն. Ա. Կիւնյան. Մինաս Ամդեցի, էջ 324:

⁵⁵ Մանրամասն տե՛ս Գ. Գալեմբյարյան. Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու. Վիեննա, 1915, էջ 64—99:

գամանքի մասին. պահպանվել և մեզ են հասել Մարտինոսի երկի Սարգիս Մահեթեու գրած 5 օրինակ՝ ՄՄ № 4347 (1701 թ.), Վիեննայի Մխիթարյան № 844 (1704 թ.)⁵⁶, Երուսաղեմի Ս. Հակոբյանց № 995 (1720 թ. մարտ)⁵⁷, ՄՄ № 3079 (1720 թ. սեպտ.), Հոռոմի հայոց Ս. Վլաս հյուրանոցի № 26 (1723 թ.)⁵⁸: Առաջին շորսը գրվել են Պոլսի Ղալաթիա թաղում, վերջինը՝ Հոռոմում, գրել է սովորաբար՝ «ի վաշելումն անձին իմոյ և յետոյ՝ ում որ պատահի»⁵⁹, ուստի 1720 թ. սեպտեմբերին (երբ մարտին գրած օրինակը գուցե դեռևս իր մոտ էր) ստեղծված ձեռագիրը կարող էր նախատեսված լինել որոշակիորեն նրա կաթոլիկ ընկերակիցներից մեկի համար: Վերջինս էլ գուցե եղել է այսօրվա № 3079 ձեռագրի վերջնական խմբավորողն ու կազմողը, որ իր ժողովածուի մեջ ընդգրկել է նաև իրենց մերձավոր նախորդ Մինաս Համթեցու երկը:

Վերջին (ժամանակագրորեն՝ առաջին) ձեռագիրը, որ պարունակում է խնդրո առարկա բնագիրը, ՄՄ № 7584-ն է, որ 1698 թ. Կոստանդնուպոլսում գրվել է մեզ արդեն ծանոթ Մինաս Համթեցու պատվերով: Գրիչ հաշատուր Զոլախն իր բազմաթիվ մանր հիշատակագրությունների մեջ խնդրում է հիշել իրեն կամ Մինաս Համթեցուն, իսկ գլխավոր հիշատակարանը գրված է նրա ձեռքով, բայց՝ ստացողի անունից. խորագիրը հետևյալն է. «Յիշատակարան է վասն յայսմ տիի հաւաքեալ Քարողգրբիս», մեզ հետաքրքրող մասը՝ «Արդ, ի ԲՃԽԷ (1698) թուականիս հայոց ես՝ պիտակ Մինաս վարդապետ, որ եմ աշակերտ տեառն լուսաւորեալ հոգի սրբազան Մարկոս վարդապետի ամենայն Հայոց, և ես ի յԱրևելից տանէն (էջմիածնից—Յու. Վ.) շուեալ հասի ի Կոստանդնուպոլիս: Եւ ըստացայ զայս Քարողգրբս և ետու գրել ձեռամբ ումեմն քարտուղարի, որ էր տեղեալ Ըստումպօլցի, անուամբ հաշատուր կոչեցեալ և մականուամբ Զոլախ ասի: Եւ այժմ եղև զրաւ սորին և կատարեցաւ Քարողգրբս»⁶⁰:

Ինչպես երևում է, ձեռագիրն իր հիմնական մասով քարողգրբ է և սլարունակում է Առաքել Սյունեցու, Տիրատուր վարդապետի, Գրիգոր Լուսավորչի, Հակոբ Ղրիմեցու, Դևորգ Երզնկացու և ուրիշների 85 քարոզ, որոնք զբաղեցնում են նրա 8ա—346բ էջերը և որոնց ցանկը զրված է ձեռագրի սկզբում (3ա—7բ): Այս հատվածն ունի 29 մամուլ (Ա—ԻԹ), որոնք հիմնականում ունեն սովորական 12-ական թերթ:

Ձեռագրի վերջը (347ա—368բ=22 թերթ) ևս զրված է նույն հաշատուր Զոլախի ձեռքով, բայց՝ առանց մամուլահամարների. այժմ առկա համարները՝ Լ (347—56=10 թերթ), ԼԱ (357—62=6 թերթ) և ԼԲ (363—8=6 թերթ) պահած են ստացողի ձեռքով. սրանք պարունակում են միայն երկու բնագիր. ա. 348ա—54ա. «Պատմութիւն Բաղաբին Յանույ» (է մամուլի առաջին 6 թերթը և 7-րդի առաջին սյունակի մի մասը):

բ. 354ա—68բ. «Այսոփիկ են կարգ կայսերաց, քագաւորաց Հոռոմայեցւոց, զոր կամեցա ժողովել մի գկնի միոյն, պատմելով զսակաւսն ի բազմաց, մանաւանդ թէ զմեծամեծա անցից և արարմանց համառօտապէս և սուղ ասութեամբ, սկսեալ Օգոստոս կայսերէ... և վասն կենաց և մահուան նոցա գրել սակաւ, զորս ի պատմագրացն մարքեցա գտանել ես՝ Մինաս վարդապետս Համթեցի, ծառայ Քրիստոսի»:

Սա Մինաս Համթեցու երկրորդ պատմական քաղագրությունն է (այսու-

⁵⁶ Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան, Մատենադարանին ի Վիեննա. հ. Բ, կազմեց Ն. Ոսկան. Վիեննա, 1963, էջ 423—4:

⁵⁷ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց. հ. Դ, Երուսաղէմ, 1968, էջ 595—8:

⁵⁸ Տե՛ս Յուցակ ձեռագրաց Հոռոմի հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս..., կազմեց Ն. Ակինյան, Վիեննա, 1961, էջ 19—20:

⁵⁹ ՄՄ ձեռ. № 4347, էջ 223բ, հմմտ. Հ. Ոսկան. Նշվ. աշխ., էջ 424:

⁶⁰ ՄՄ ձեռ. № 7584, էջ 298բ:

հետեւ կկոչենք՝ «Կարգ կայսերաց»), որը տպագրված է նախորդի հետ միա-
կալմբ⁶¹:

Այսպիսով, այս ձեռագրում Քարողգրքի ծավալից ու մամուլահամարնե-
րից դուրս և նրան իբրեւ հավելված կցված է երկու բնագիր, որոնցից առաջինը
մեղ հետաքրքրող Անիի պատմությունն է, մյուսը՝ ստացողի քաղաքապետին:
Ըստ որում, այստեղ երկուսի ձեռագրական ավանդույթն էլ ընդհատվում է՝
ներանց ավելի հին որեւէ օրինակ հայտնի չէ: Թվում է, որ սա արդեն բավակա-
նաչափ հիմք է, որպեսզի իրավունք ունենանք կասկածելու, թե առաջին բա-
նաքաղության (Անիի պատմության) հեղինակը ևս կարող է լինել նույն ստա-
ցողը՝ Մինաս Համթեցին: Այս կասկածի օգտին խոսում են նաև ձեռագրի որոշ
հատկանիշներ, և Մինաս Համթեցու «Աղգաբանութեան» ու «Կարգ կայսե-
րաց»-ի տպագրի ու ձեռագրերի համեմատությունը, որոնք մեզ հանգեցրել են
հետևյալ ենթադրությանը:

1698 թ. Մինաս Համթեցին, Քարողգրքից բացի, ընդօրինակելու համար
նաչառուր Չուխին է տվել նաև իր երեք քաղաքապետության (Անիի պատմության,
«Կարգ կայսերաց»-ի և «Աղգաբանութեան») ինքնագիր-սեղագիր օրինակը⁶²:
Այսպես մտածելու հիմք տալիս է տպագրի մի հիշատակաբանը. «Ի ՌՃԽՃ
(1698) շարագրեցաւ կարգ թագաւորացս և անցք աշխարհիս Հայոց ի Մինաս
վարդապետէ Համթեցոյ»⁶³, ինչպես տեսնում ենք, այս թվագրումը վերաբե-
րում է նաև «Աղգաբանութեան»-ը, որն այժմ մեր ձեռագրերում չկա, բայց
սկզբնապես պետք է եղած լինի, որովհետև այժմյան կազմը ձեռագրի ժամա-
նակակիցը չէ և նման է XVIII դարի վերջերին Պոլսում տպագրված գրքերի
կազմերին: Իսկ ձեռագիրը թերի է թվում, որովհետև նրա հավելվածային մա-
սը հիշատակարան չունի (վերը բերվածը վերաբերում է միայն Քարողգրքին,
թվում է, որ տպագրի բերված հիշատակարանը բխում է Մինասի սեղագրի
վերջից, որտեղից այն պետք է անցած լիներ նաև ՄՄ № 7584-ին, ուր այժմ
չկա վերջից մեկ կամ երկու մամուլ՝ ընկած լինելու պատճառով: Նաչառուր
Չուխին իր գեղեցիկ (գրչության) գրով ընդօրինակել է Մինասի գործերի հե-
ղինակային օրինակը, բայց մամուլահամարներ չի նշանակել, որովհետև հե-
ղինակ-ստացողն սկզբում մտադիր չի եղել այն կազմել Քարողգրքի հետ միա-
տեղ (հետո որոշել է այդ և ինքն էլ նշանակել համաբնեւը): Ձեռագիրն ստա-
նալուց հետո Մինասն այն իր հետ տարել է Երուսաղեմ (որի պատրիարք է
ընտրվել այդ նույն տարվա վերջին), իսկ նրա սեղագիրը մնացել է Պոլսում:
Վերջինից էլ հետագայում ՄՄ № 3079-ի կաղմողը վերցրել է «Աղգաբանու-
թիւնը» և «Պատմութիւն Անույ»-ն, իսկ «Կարգ կայսերաց»-ն անտեսել է, որով-
հետև ի դեմս Մարտինոսի երկի և մյուս ցանկերի արդեն ուներ նույն նյութի
և՛ ընդարձակ, և՛ համառոտ տարբերակները: Այս սեղագրի կամ նրանից ծա-
ղած մի այլ օրինակի հիման վրա էլ կատարվել է բնույթով իրար լրացնող
(Հայոց թագավորների և Հռոմի կայսրերի գահացանկեր) նրա երկու գործի
տպագրությունը. հրատարակիչները նախընտրել են «Աղգաբանութիւն»-ը
դնել սկզբում, թեև դատելով ըստ նրա կարողությունների՝ որպես ստեղծագոր-
ծողի, Մինաս Համթեցին պետք է ստրկորեն հետևած լիներ իր այս բանաքա-
ղությունների հիմնական աղբյուր Մարտինոսի գործի հայերեն թարգմանու-
թյանը, ուր հայ թագավորների ու կաթողիկոսների ցանկերը դրված են Հռոմի
կայսրերի ու պապերի պատմություններից հետո: Տպագրում Անիի պատմու-
թյունը չկա, որովհետև «Աղգաբանութեան» մեջ արտացոլված էր նաև Բագ-
րատունյաց շրջանի պատմությունը: «Աղգաբանութեան» և «Կարգ կայսե-

⁶¹ Մինաս Համթեցի, տպագիր, էջ 59—164:

⁶² Նրա գիրը գեղեցիկ չէր՝ գրչության կանոնավոր գրի համեմատ բավական անփույթ և
անկանոն էր, ուստի և Համթեցու ձեռքով գրված և մեզ հասած միակ ամբողջական ձեռագիրը
նրա «Օրագրութեան» եզակի օրինակն է (Երուսաղեմի Ս. Հակոբյանց ձեռ. № 1316. ՄՄ ման-
րատպագրվեն № 1040):

⁶³ Մինաս Համթեցի, տպագիր, էջ 164:

րաց»-ի տպագրի ու ձեռագրերի (ՄՄ № 3079, 7584) տարբերությունները, որոնց մեծ մասն առաջինի միտումնավոր շեղումներ կամ թյուրընկալումներ են, առաջացել են Մինասի անընթեռնելի և համառոտագրություններով լի ձեռագրի պատճառով⁶⁴:

Համթեցու սևագրում եղել են նաև հեղինակի լուսանցային հավելումներ, որոնք այժմ կան նաև ՄՄ № 7584 ձեռագրում⁶⁵: Դա արտահայտվել է ՄՄ № 3079-ում՝ Անիի պատմության վերջում. այստեղ գրիչը դժվարացել է տեղադրել մի լուսանցագրություն⁶⁶, ուստի և իր օրինակում էլ լուսանցում թողնելով այն, կցել է հետևյալ բացատրությունը. «Ով ընթերցող եղբայր, սա չակերտ՝ ոչ ունէր. գտեղն ոչ գիտելով, աստ եղի, այսպէս իմա»⁶⁸: Կնշանակի նրա հիմքի (Համթեցու սևագրի) նախընթաց էջերում ևս լուսանցային հավելումներ են եղել, բայց սրանք չակերտ ունեցել են և № 3079-ում դրվել են իրենց օրինական տեղում: Նույնպիսի բառեր, արտահայտություններ և նախադասությունների առանձին մասեր էլ կան «Ազգաբանութեան» և «Կարգ կայսերաց»-ի ձեռագրերում, որ տպագիր չունի, որովհետև վերջինիս հիմքում (Համթեցու օրինակում) եղել են լուսանցագրությունների ձևով⁶⁹ և հրատարակիչների կողմից անտեսվել են:

Այս նույն կարգի լուսանցային հավելումներ (գրված են Մինաս Համթեցու ձեռքով) շատ կան նաև ՄՄ № 7584-ում, հատկապես՝ «Կարգ կայսերաց»-ի էջերում: Դեռևս Ն. Ակինյանն է պարզել, որ Համթեցու տպագրված բանաբաղությունների հիմնական աղբյուրը Մարտինոս Օպավացու «Գաւազանագրքի» հայերեն թարգմանությունը և նրա մեջ թարգմանիչ Ներսես Պալիանենցի մուծած հայկական բովանդակություն ունեցող հավելումներն են. «Աս գրութեանն փոխառնված է «Գիրք գաւազանաց» (խորագիրը—Յու. Վ.), ասկե ծաղկաբաղված է թե՛ Հայոց և թե՛ Հռոմայեցվոց թագավորներու և կայսրներու գավազանները: Ապա մուծած է գրական և անգիր պատմությունները»⁷⁰: Եվ իրոք, 1674 թ. Ներսես Պալիանենցի ինքնագրից⁷¹ Համթեցին իր համար ընդօրինակել է տվել Մարտինոսի երկը⁷² և հետագայում լայնորեն օգտվել նրանից:

ՄՄ № 7584 ձեռագիրը գրի ձեռքից պատրաստի ստանալուց հետո Համթեցին նույն աղբյուրից բաղելով, «Կարգ կայսերաց»-ի լուսանցում գրանցել է⁷³ բազմաթիվ նոր հավելումներ⁷⁴, որոնցից ոչ մեկը չակերտ չունի: Այսպես,

64 Դրանում կյսրելի է համոզվել նրա «Օրագրութեան» նույնիսկ մի էջը կարդալով:

65 Սրանց կանգրդումներն մի փոքր անց:

66 ՄՄ № 7584-ում ևս դա անհաջող է տեղադրվել, որի պատճառով Հ. Մարգարյանը դիմել է կոր փակագծերի օգնությանը. «Սմբատ թագաւորէ (և կիւն նորա Կարգամիտէս շինէ զկաթողիկէն Յանույ) զկնի հօրն և պարսպէ զՅանի». Մի ի թար Անեցի, էջ 122:

67 Սա նշան է, որ սովորաբար դրվում էր և՛ լուսանցային հավելման կամ սրբագրման, և՛ չարագրանքի մեջ նրա մտնելիք տեղում: Հետագա օրինակների գրիչներն առաջնորդվում էին սրանցով (փոքր շրջանակ, ստորակետ, աստղանիշ և այլն) և իրենց օրինակներում հավելումները դնում անհրաժեշտ տեղերում:

68 ՄՄ ձեռ. № 3079, էջ 357ր: Պատկանյանի օրինակում (էջ 11ա) այս հավելումը և գրի ծանոթությունը կոր փակագծերի մեջ դրված են բնագրի վերջում. սա ևս նշանակում է, որ նրա հիմքը Լոկել է ՄՄ № 3079-ը (հմտ. Մի ի թար Անեցի, էջ 122, տարբ. 101):

69 «Իսկ ի մեռսնել քաղաւնյն Թորոսի, Թորոս և Հեթում և տուն զթագն», «Երեւալ Սմբատ, ըմբռնեաց ճնարիւ զնոսա», «Հառ զԱյաս, կործանեաց զպարխսյն և այլեաց ճրով և յետս դարձաւ» (ՄՄ ձեռ. № 3079, էջ 250ր—1ա), «Օգղախնն մօնարն կոչի» (ՄՄ ձեռ. № 7584, էջ 354ա). Ընդգծված հատվածները տպագրում (էջ 54—5, 57, 62) չկան:

70 Ա. Կ. Յ. յ. Անեցի, Մինաս Սմեղեցի, էջ 334:

71 Վենետիկի Մխիթ. մատենադարանի ձեռ. № 1578:

72 ՄՄ ձեռ. № 2038:

73 Համթեցու գրի համար տե՛ս ՄՄ մանրատպագրի № 1040:

74 ՄՄ ձեռ. № 7584, էջ 354ր, 356ա, 358ա, 361ա, 362բ, 365բ, 366ա:

կարլոս մեծին վերաբերող հատվածի լուսանցում կա երեք այդպիսի հավելում. բերենք միայն երկուսը. «Գօռլոսն ճաղատ ասի. մօրուս ունէր երկայն մինչև յօտսն», «Սա ուսոյց զտղայսն իւր ի գործ զինուց պատերազմի, և զդուստրոս իւր՝ ի ջահարա, իլիկս և ի նախշս գործել, քանզի յոյժ իմաստուն էր խելօք»⁷⁵: Սրանք տպագրի մեջ չկան, չկան նաև այս կարգի մի շարք այլ հատվածներ, որոնք մեր ձեռագրում բուն շարագրանքի մեջ են: 1701 թ. Երուսաղեմում, Համթեցու սչքի առաջ, Հովհան քահանայի և այլ գրիչների ջանքերով, ոմն Իսաիթ Զուղայեցու համար այս Քարոզգրքից ընդօրինակվել է ՄՄ Ա՝ 6287 ձեռագիրը, որտեղ Անիի պատմութիւնը չկա, բայց «Կարգ կայսերաց»-ի մեջ էլ չեն մտել գաղափար օրինակի (ՄՄ ձեռ. № 7584) լուսանցային հավելումները⁷⁶: Ի վերջո, Համթեցու նույն կարգի մի այլ հավելում էլ գրանցված է Ա՝ 7584-ի Անիի պատմութիւն մի էջում՝ Բաբեկի մասին գրչի ձեռքով գրված է. «յազգէն Իլամացոց»։ Մինասը համապատասխան չակերտով իր ձեռքով լուսանցում սրբագրել է. «յազգէն Իլիմացոց» և ավելացրել՝ «և կոչեաց զանուն զօրաց իւրոց Անմահից զօրք»⁷⁷: Սա արդեն թույլ է տալիս մտածել, որ Մինասն այստեղ ևս գործ ունի սեփական քաղագրութիւն հետ⁷⁸: Նրան պատկանած ուրիշ ձեռագրերում ևս կան մի ձեռքով արված լուսանցագրութիւններ, բայց սրանք գերազանցապես մատնանշումներ են և կոչված են ընթերցողի ուշադրութիւնը որևէ կարևոր հատվածի վրա հրավիրելու⁷⁹: Ահա Միքայել Ասորու Ժամանակագրութիւն նրա օրինակի լուսանցում գրանցված մի մատնանշում. «Տես թէ զինչ ասէ վասն արծաթով ձեռնադրեալ քահանայից»⁸⁰:

Կարծում ենք, որ «Պատմութիւն Յանույ» եռամաս բնագիրը Մինաս Համթեցու անվան հետ կապելու համար վերը ներկայացված իրավունք տալիս է: Թվում է՝ ճիշտ չէր լինի մտածել, թե նրա աշածը եղել է միայն պատրաստի բնագրերի պարզ մեխանիկական կցումը, որովհետև առաջինն ու երրորդը (որոշակիորեն վերաբերում են Անիին և նրա Բագրատունի գահակալներին) շարադրված են պատմական հեռավոր անցյալի դեպքերի նկարագրութիւն և բանգով, փաստերի, թվերի և թվականների շփոթներով ու սխալների առատութեամբ նմանվում են Համթեցու մյուս բանաբաղութիւնների հատկանիշներին: Հիշենք Ղ. Ալիշանի գնահատականը՝ «ուրումն աղգայնոյ յետին գարուց», իսկ «Աղգարանութեան» մի թերի օրինակ իբրև անհայտ հեղինակի գործ նկարագրող Բ. Սարգիսյանն այն բնորոշել է որպես «յետին ժամանակի և հետեակ գրողի գործ»⁸¹: Ս. Պալասանյանն էլ Համթեցու գործերի վերոհիշյալ տպագրի վերահրատարակութիւն առթիվ ասել է հետևյալը. «Ընդհանրապէս ստոր ու խակ գործ է»⁸²: Ի դեպ, «Աղգարանութեան» տպագրի վերջում կա մի հիշատակարան, որի «համառօտ ծաղկաբաղ արարեալ»⁸³ արտահայտութիւնը բախական համահնչուն է Անիի պատմութիւն «ծալրաբաղ և համառօտ ժողովեալ» ենթախորագրին: Հիշենք նաև, որ Համթեցին տասնյակ տարիներ շարունակ ազատ հնարավորութիւն ուներ օգտագործելու Զնքուշի վանքի, էջմիածնի, Երուսա-

75 նույն տեղում, էջ 365բ. հմտ. ՄՄ ձեռ. № 2038, էջ 127բ:

76 Տե՛ս ՄՄ ձեռ. № 6287, էջ 269բ—84ա:

77 ՄՄ ձեռ. № 7584, էջ 3օ3բ:

78 Հ. Մարգարյանն այս հավելումը գրանցել է որպես տարբերություն (Մ խ ի թ ա ր Ա ն ե-
յ ի, էջ 121). մեր կարծիքով պետք է մոծել բնագրի մեջ:

79 Այս ծանոթութիւնները հաճախ ուղեկցվում են որոշակի ուղղվածությամբ ցուցամատ
ունեցող ձեռնանիշերով, որոնցից շատ կան նաև ՄՄ Ա՝ 7584 ձեռագրի վերջին թերթերի վրա
(353բ—363բ): Այս ամենը բխում է ներուս Պալասանյանի վերոհիշյալ ինքնագրից (Վենետիկի
ձեռ. № 1578):

80 ՄՄ ձեռ. № 1483, էջ 99բ:

81 Մար ցուցակ հալերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Բ,
Յօրինեց Բ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1042:

82 Հմտ. Ա կ ի ն յ ա ն. Մինաս Ամդեցի, էջ 334:

83 Մ ի ն ա ա Հ ա մ թ ե Յ ի, տպագիր, էջ 58:

ղեմի և այլ մատենադարանների ձեռագրերը⁸⁴, այլև՝ ուներ հայ պատմագիր-ների երկերի մի քանի ստվար ժողովածու⁸⁵ և իր բանաքաղոթյունների աղ-բյուրները փնտրելու համար մեծ նեղություն չէր կրի:

Միայն «Վասն խօնթքարի» մասն է, որ, ինչպես արդեն ասել ենք, կարող է թողնել պատրաստի վերցված և մեքենայաբար կցված բնագրի սպավորու-թյուն: Բայց այս դեպքում ևս գործ ունենք ուշագրավ թվացող մի հանգաման-քի հետ: Ղ. Ալիշանը հրապարակել է Երեմիա Քյոմուրճյանի մի հաղորդումը, որ վերաբերում է 1551 թ. Վալախիայի հայության բռնի դավանափոխության-նը⁸⁶, իսկ Վ. Հակոբյանն արձանագրել է դրա և «Վասն խօնթքարի» «բնագրերի համապատասխան հատվածների նույնությունը»⁸⁷, ապա՝ հնարավոր համա-րելով, որ նրանք «ժամանակակից տարբեր հեղինակների են պատկանում», ավելի շատ կողմնակից է այն ենթադրությանը, թե Քյոմուրճյանի օգտագոր-ծած աղբյուրը ծագել է «Վասն խօնթքարի» բնագրից⁸⁸:

Հայտնի է, որ Քյոմուրճյանի մահվանից (1695 թ.) հետո նրա ձեռագրերն անցել են պոլսահայ մի այլ մատենագրի՝ Մաղաթիա Ճեվահիրճյանին⁸⁹, և միայն բավական ժամանակ անց, Մաղաթիայի ձեռագրերի հետ միասին, վեր-ջինիս թոռ և Մխիթարյան միաբան Հարություն վարդապետի ձեռքով, տարվել է Լեննտիկ⁹⁰: Ղ. Ալիշանի տպագրած հատվածը հավանաբար քաղված է Քյո-մուրճյանի «Տարեգրական պատմություն»-ից, որի միակ, հեղինակային օրի-նակը Մխիթարյան մատենադարանում է⁹¹: Քանի դեռ այս մեծարժեք աղբյու-րը հրատարակված չէ, իսկ նրա բովանդակությանը վերաբերող բնորոշումները շատ կետերում հակասում են իրար⁹², վերջնական եզրակացություն անել հնա-րավոր չէ, բայց, կարծում ենք, ավելորդ չի լինի մի երրորդ ենթադրություն ևս. «Վասն խօնթքարի» բնագիրն ունի տարեգրության բնույթ՝ իրար ետևից թվարկվում են 1546, 1547, 1548, 1551, 1553 և 1556 թթ. վերաբերող դեպքե-րը, ուստի հնարավոր է նաև, որ Մինաս Համթեցին Մաղաթիա Ճեվահիրճյանից վերցրած լինի Քյոմուրճյանի հիշյալ գործը և, նրա մի հատվածը վերաշարադ-րելով, ստեղծած «Վասն խօնթքարի» բնագիրը:

Այսպիսով, թեև չունենք գոնե մեկ ուղղակի փաստ՝ մի հիշատակարան կամ հաղորդում, որտեղ շիտակ ասված լիներ, թե «Պատմութիւն քաղաքի նանույ» եռամաս բնագրի կազմող-հեղինակը Մինաս Համթեցին է, սակայն, կարծում ենք, որ վերը ներկայացված փաստարկները բավարար են, որպեսզի այս վերագրումը համարվի գոնե հավանական: Ինչու դեպքերում, քանի դեռ չի գտնվել այս բնագիրը կամ նրա առանձին մասերը պարունակող մի ձեռա-գիր⁹³, որ գրված լինի 1698 թ. ավելի վաղ և ավանդույթով կապված լինի ՄՄ

84 Տե՛ս Ա. Կ. Ի. յ ա. Ն. Մինաս Ամզեցի, էջ 323--32:

85 Տե՛ս, օրինակ, ՄՄ ձեռ. ՆՆ 1482, 1483, 2038 և այլն:

86 Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռուսիայի. Վենետիկ, 1896, էջ 18—9:

87 ՄԺ, Ա, էջ 132:

88 Նույն տեղում:

89 Տե՛ս Մ. Չ. մ. շ. յ ա. Ն. Պատմութիւն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 723:

90 Տե՛ս Մ. Մ. ա. ո. ա. Թ. Ե. Կ. Ի. յ ա. Ն. Կենսագրություն Երեմիի արանց. հ. Ա, Վենե-տիկ, 1833, էջ 241:

91 Ձեռ. Ն 509. հմմտ. Ե. Ա. Կ. Ի. յ ա. Ն. Երեմիա Քյոմուրճյան. Կյանքն և գրական ստեղծա-գործությունը. Վիեննա, 1933, էջ 94:

92 Նույն տեղում, էջ 90—3:

93 Վենետիկի Մխիթարյան Ն 2698 (նախկին «Խմբագիր ԺԱ, թիւ 1») նոտրգիր ձեռագիրը (14 թերթ) ևս ծագում է ՄՄ Ն 3079-ից, որովհետև ունի վերջինիս հիշված ծանոթությունը. «Ով ընթերցող Էղբայր, ստ չակերտ ոչ ունէր, գտեղն ոչ գիտելով, աստ Էղի. այսպէս իմա»: Այս տեղեկությունը շնորհակալութեամբ ստացել ենք Մխիթարյան միաբան Ս. Վ. Ճեմճեմյանից:

№ 7584 ձեռագրի ու Մինաս Համթեցու և նրա հետևորդների միջազնայրի հետ, պետք է, թեկուզև թեականորեն, համարել, որ «Պատմութիւն քաղաքին Յանոյ» բանաբաղության հեղինակը Մինաս Համթեցին է և որ այս գործը նա ստեղծել է 1698 թ., Կոստանդնուպոլսում:

К ВОПРОСУ ОБ АВТОРЕ И ВРЕМЕНИ КОМПИЛЯТИВНОЙ «ИСТОРИИ ГОРОДА АНИ»

Ю. А. ВАРДАНЯН

Резюме

Составителем компилятивной «Истории города Ани» Г. Алишан считал некоего литератора позднего средневековья, А. Апасян—неизвестного автора, а Г. Абгарян выдвинул предположение о принадлежности ее историку конца XII в. Мхитару Анеци. А. Маргарян, не соглашаясь с этим, опубликовал «Историю» как творение анонимного автора позднего средневековья. На основе кодикологического анализа существующих списков (Матенадаран им. Маштоца, рук. №№ 7584, 3079, библиотека мхитаристов в Венеции, рук. № 2698, список К. Патканяна) мы приходим к выводу, что компилятивный труд «История города Ани» создан общественным и церковным деятелем второй половины XVII в. Минасом Амтеци, в 1698г. в Константинополе.